ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

25.05.2012թ.
169-ի 9

“ՅՈՒՔՈՄ” հեռահաղորդակցական
ընկերության տնօրեն
պարոն Հայկ Եսայանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Եսայան,

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ՏԱ մասին ՀՀ օրենքի գործողությունը տարածվում է նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների վրա: Նույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասին համաձայն՝ տեղեկություն տնօրինող են համարվում նաեւ հանրային նշանակության կազմակերպությունները: Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանրային նշանակության կազմակերպություն են համարվում նաեւ կապի ոլորտում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները, ինչպիսին “ՅՈՒՔՈՄ” հեռահաղորդակցական ընկերությունն է:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները:

1. Ո՞վ (ովքե՞ր, ո՞ր կազմակերպությունն) է “ՅՈՒՔՈՄ” հեռահաղորդակցական ընկերության սեփականատերը:
2. 2011թ.-ի տվյալներով քանի՞ բաժանորդ ունի “ՅՈՒՔՈՄ” հեռահաղորդակցական ընկերությունը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան